ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 350-Ա 11 հունիսի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԵՐԵՄ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանի 2026 թվականի հունիսի 10-ի Ն/1924-2026 առաջարկությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Երեմ Քարամյանին հատուկ առաջադրանքները և աշխատանքները ժամանակին ու որակյալ իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի 4111 <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված միջոցների հաշվին, խրախուսել իր մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել հրամանից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

11.06.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ